



“ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅՑ ՈՐ ԻՆՏԻ ԳՍՆ” ԴՈՒԿ ԺԸ 16:

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1886

ԹԻԻ 7



ՀԷՆՐԻ ՄԱՐԹԻՆԻ ՏՈՒՆԸ

Աւետարանական եկեղեցիք սրբոց տօնախմբութիւն չեն կատարեր, և ոչ կը նային անոնց իբրև բարիխօսներու, սակայն կը պատուեն այն ֆրիստօնեայ գիւցաղունները, որք աշխատած են հաւատարմութեամբ և անձնուիրաբար ի նպաստ ճշմարտութեան և արդարութեան դատին աշխարհի մէջ: Այսպիսի հաւատարիմ մշակ մը, թէ ըլլայ Հրեայ նման Պօղոսի, կամ Յոյն նման Ոսկեբերանի, և կամ Անգղիացի

ՀԷՆՐԻ ՄԱՐԹԻՆԻ ՏՈՒՆԸ

նման Հենրի Մարթինի, թէ ապրի առաջին դարուն կամ տասն և իննեւորորդ դարուն մէջ, միշտ կը յարդուի բոլոր եկեղեցիէն, և անոր յիշատակը միշտ սիրելի և օրհնեալ է:

Գանգէս գեալին վրայ շինուած Սեւրամիուր քաղաքը կը յիշեցունէ մեզ այսպիսի քանի մը գիւցաղուններ: Այս քաղքին մօտ գերեզմանատան մէջ կը ննջեն Քէրիլի, Մարշմէնի և Ուորտի


մարմինք, որք առաջիններն են արդի միսիոնարաց: Քէրիլ Հնդկաստանի ցամաքը ելաւ 1793 ին, և միւսները գացին 4 տարի ետքը, ուր անոնք ոչ միայն նեղուեցան կերակրոյ համար, այլ բոլորն ալ երկրէն պիտի արտաքուէին եթէ զանոնք չպաշտպանէին Տանիմար քաջիք, որք յայնժամ կը տիրէին Սեւրամիուրի:

Հենրի Մարթին Հնդկաստան ելածարու համար նաւով ճամբայ ելաւ 1803 ին: Նա Քէմպրիճի համալսարան

նին մէջ բարձրագոյն պատուոյ արժանացած էր . — այն համալսարանը կազմող վարժարաններէն միոյն պատկերը դրած ենք Տղայոց Աւետաբերին Ապրիլի թուոյն մէջ : Նա էր որ առաջին անգամ գնաց ի Սերամիւր և բնակեցաւ հին մեհեանի մը մէջ, որ, ինչպէս կը տեսնէք պատկերին մէջ, շինուած է գետափան վրայ : Մեհեանը Անգղիացւոյ մը հողին վրայ էր, և Մարթին Ս. Գրոց քանի մը մասերը թարգմանեց Հինդի լեզուին ճիշդ այն տեղւոյն վրայ ուր երբեմն կուոց պաշտօն կը մատուցուէր : Քիչ մը ետքը սորվեցաւ Պարսկերէն և Նոր կտակարանը թարգմանեց նոյն լեզուին : Առողջութիւնը փաստուած ըլլալով ստիպուեցաւ թողուլ իւր աշխատութիւնները և ջանալ կազմուրուիլ ճամբորդութեամբ : Դժուար և տաժանելի ճամբորդութիւն մը ըրաւ Պարսկաստանի մէջ և փոքր Ասիոյ քանի մը կողմերը, և վերջապէս մեռաւ Եւզոկիա հոկտ. 16, 1812 ին, և յետոյ անոր մարմինը փոխադրուեցաւ տեղւոյն Աւետարանականաց ժողովարանին պարտէզը : Հէնրի Մարթին կրնար համբաւստանալ իբրև քաղաքագէտ կամ իբրև դատաւոր, բայց ո՞վ որ կը հաւատայ հանդերձեալ աշխարհի վարձատրութեանց, պիտի ըսէ թէ անոր կեանքը նուազ օգտակար եղաւ աշխարհի :

Անտարակոյս աշխարհ յառաջ կ'երթայ, բայց անցելոյն մէջ եղած են զարմանալի քաղաքակրթութիւնք, որոց գործերուն առջև կը կայնինք սա

գործերը արդարև կրնան բազմաուիլ, հաստատութեան մասին, եզրիպատական բուրգերու կամ Չինական մեծ Պարսպին հետ : Ո՞ր կան աւելի գե



ՀՆԿԿԱՅ ԶԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Մեք, որ կ'ապրինք տասն և իններորդ դարու վերջին կիսուն մէջ, են թակայ ենք կարեկցաբար նայել անցեալ սերնդոց վրայ, իբրև սգէտ բարբառոսներ մեզի հետ բազդատելով :

ՄԵԶԱՆԻ ՄԸ ՄՈՒՏՔ Ի ՀՆԿԿԱՅԱՆ

զգացմամբ թէ շատ բաներու մէջ անոնք գոնէ հաւատար էին ժամանակիս ամենէն զարգացեալ ազգաց : Այս ճշմարիտ է մանաւանդ ի մասին ճարտարապետութեան : Ժամանակիս ո՞ր

ղեցիկ ձեռով կառուցուած շէնքեր քան հին հեթանոսական մեհեանները կամ քրիստոնէական նախնի դարուց եկեղեցիները : Եւ ի՞նչ զարմանալի համբերութիւն և հանճար կը տեսնուի

Հնդկական ճարտարապետութեան մէջ Մեք բաղդատարար քիչ բան գիտենք հարաւային արեւելեան Ասիոյ պատմութեան նկատմամբ, բայց այն ժամանակին քարեղէն շինուածներ կու տան մեզ տեսակ մը արձանագրութիւն զոր կը կարգւայ այժմ նա, որ կ'այցելէ Հնդկաստանի հին մեհեանները և պալատները, և որմէ կ'իմանանք ժամանակին հոն բնակող ազգաց կամ ցեղերու մեծութիւնը: Պատկերին մէջ տեսնուած դրան մուտքն է ստոր մի ապացոյցը: Այսպիսի մուտքեր գտնուած են շատ տաճարներ և պալատներ մոններու տեղերը, և յաճախ 400 ոտք բարձր են անոնք: Ասոնք շինուած են որձաքարէ (կրանիւղ), և մէն մի քառակուսի մասնաչափ ծածկուած է խիստ փափուկ քանդակներով: Եթէ պատկերին մէջ տեսնուած դրան մուտքին բարձրութիւնը բաղդատենք հոն կայնող մարդուն բարձրութեանը հետ, կրնանք գաղտար մը կազմել թէ՛ դրածին մեծութեան և թէ՛ կատարելու համար զայն պէտք եղած աշխատութեան մեծութեան վրայ:

Բայց դրանց մուտքի վրայ ի դործ դրուած աշխատանքը պզտիկ բան է բաղդատելով այն աշխատանաց հետ, որ թափուած է տաճարներու վրայ ուր կ'առաջնորդեն այն մուտքերը: Եւ եթէ չընդհիկը, նուաստացոյցի կռպատութեան մը ազդեցութեանց ներքեւ, կարող էին այսպիսի դործեր կատարել, աւելի մեծ բան կրնանք սպասել անոնցմէ, երբ Աւետարանը, որ այնքան մեծ նպաստ մատուցած է Եւրոպայի, առ հասարակ ընդունուի անոնցմէ, և ժամանակ ունենայ տարածել իւր գերազանց ոգին և ազդեցութիւնը:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՈՒՒԼ ՊԱՀՈՒՅՑԱԻ ՍԱՌԵԼԷ  
Ազգատիկ տղայ մը Ռելի անուն, որ ի Սկովտիա ոչխարներ կ'արածէր, սաստիկ ձեան փոթորիկ բռնուեցաւ բլուրներուն վրայ: Երկար ատեն և ընջութեամբ տողաց և ջանաց վաբել իւր հօտը դէպ ի տուն ուշադրութեամբ գիտելով ճամբուն վրայ դըռնուած նշանները զորս կը ճանչնար:

Բայց ամէն բան երաւ ի դերեւ. ձիւնը կ'իջնէր արագ, և գիշերը վրայ չհասած ճամբաներու և շաւիղներու ամէն հետք եղան անյայտ. ուստի եղկելին Ռելի գտաւ զինք առանձին իւր ոչխարաց հետ լեռանց մէջ:

Երբ գիշերը վրայ հասաւ, մահացու թմբուցութիւն մը սկսեց գալ անոր վրայ, որուն դէմ կարող չէր դնել և չունէր բնաւ տեղ մը ուր ապաստանէր: Վաճառ որոյ պատկեցաւ իւր ոչխարներուն մէջ որպէս զի քնանար և մեռ:



ԻՆՉՊԷՍ ԿԻՐՁԸ

ներ. քանզի կը խորհէր թէ անշուշտ "յլ ևս պիտի չարթննար երկրի վրայ: Ատուածային օգնութիւն հայցելու համար հեղձակիչ ձայնիւ աղօթելէ ետքը ինկաւ ի քուն. և մինչ պատկած էր ուրիշ ոչխարք ևս եկան և խոնեցան անոր շուրջը: Եւ արդարեւ զարմանալի կ'երևի թերևս որ անոնց մարմինները պահեցին տղան սառելով մեռնելէ: Տնէն քանի մը անձինք ճամբայ երան փնտռել զՌելի, և գտան զնա շրջապատեալ տաններկու ոչխարներէ, որոց բնազդումը աղատած էին զնա մեռնելէ: Ոչխարք զերենք տաք պահելով՝ անոր մէջ պատար օրերուն մէջ: Ըստ մեզ, ո՛չ մէկ մարդկային դործ ունի այնչափ հրապոյր որչափ բնութեան այս գեղեցկութիւնները: Ամենէն փառահեղ շէնքեր հաղիւ կը չարժեն հետաքրքրութիւնը քանի մը անգամ մեր անոնց մէջ մտնելէն ետքը, բայց այսպիսի բնական տեսարան մը ո՛չ երբէք կը ձանձրացունէ զմարդ: Գետակը կարծես կենդանի է և կը խայտայ, և անոր խոխոջիւնը նման է ձայնի որ կը հռչակէ Արարչին իմաստութիւնը և զօրութիւնը:

Հած էին տաքութիւն և կեանք: Ռելի ապրեցաւ այնուհետեւ շատ տարի և կը պատմէր իւր մտնուութեան այս արկածը, երբ կորսուեցաւ հիւսիսային ամայի բլրոց մէջ:

ԼՐՏՅՈՐՄՈՒՆԻ ԿԻՐՁԸ

Եթէ մեր փոքրիկ ընթերցողք բանան իրենց աշխարհագրութիւնները, պիտի տեսնեն որ Անգղիոյ հարաւային արևմտեան անկիւնը թերակղզի մը կը ձևացունէ: Այս թերակղզոյն վրայ կարծր որձաքարէ (կրանիւղ) կազմեալ Տարթմուր կոչուած լեռնադաշտ մը կայ, որ Անգղիոյ հարաւային մասին մէջ բարձրագոյն երկիրն է: Այս լեռնադաշտը շրջապատող ցած երկիրը շատ բերրի է, բայց լեռնադաշտը կը բերէ քիչ մը խոտ միայն, ուր կ'արածին խաչինք և արջաւք տարուան քանի մը ամիսներուն մէջ: Տարթմուրէն ծագում կ'առնուն քանի մը փոքր գետեր, յորոց ամանք կը հոսեն դէպ ի հիւսիս և ոմանք դէպ ի հարաւ: Այս գետոց փոքրագոյններէն միոյն վրայ կ'իյնայ պատկերին մէջ տեսնուած այն գեղեցիկ Լիտֆորտի կիրճը: Հազարաւոր տարիներու շրջմամբ, ջուրը իրեն համար ճամբայ մը բացած է այդ կարծր որձաքարին մէջէն, և մինչ կը գիտենք պատկերը կարծես թէ կը լսենք ջուրին ձայնը որ սահելով ջրվէժն ի վար՝ կը մտնէ կիրճը: Գաղցր պիտի ըլլար նստել դահլանդին ստուերին տակ և լսել գետակին ձայնը ամբան այս

տար օրերուն մէջ: Ըստ մեզ, ո՛չ մէկ մարդկային դործ ունի այնչափ հրապոյր որչափ բնութեան այս գեղեցկութիւնները: Ամենէն փառահեղ շէնքեր հաղիւ կը չարժեն հետաքրքրութիւնը քանի մը անգամ մեր անոնց մէջ մտնելէն ետքը, բայց այսպիսի բնական տեսարան մը ո՛չ երբէք կը ձանձրացունէ զմարդ: Գետակը կարծես կենդանի է և կը խայտայ, և անոր խոխոջիւնը նման է ձայնի որ կը հռչակէ Արարչին իմաստութիւնը և զօրութիւնը:

«ԳՊՐՈՑ ՊԷՏԻ Ե ԵՐԹԱՄ»

«Հայր, դպրոց պէ՞տք է երթամ»,  
ըսաւ Յոննիկ, առաւօտ մը մինչ մայրը  
կը պատրաստէր զնա : «Ես չեմ հաս-  
կընար գիրքերը, և բնաւ պիտի չհաս-  
կընամ : Ես կ'ուզէի մանաւանդ փոյտ  
կտրել անտառին մէջ քեզի հետ և  
ստասիկ աշխատել :»

«Յոննիկ, երէկ ի՞նչպէս կարեցինք  
այն ահագին ծառը», հարցուց հայրը :

«Մէկ հարուած տալով մէկ անգա-  
մին, և ընելով այնպէս շարունակ»,  
պատասխանեց տղան :

«Այո», ըսաւ հայրը, «մէկ բառ  
սորվելով մէկ անգամին և ընելով այն-  
պէս շարունակ, պիտի սորվիս լաւ  
կարգաւ. մէկ վանկ սորվելով մէկ ան-  
գամին, և ընելով այնպէս շարունակ,  
պիտի սորվիս լաւ հեղել. մէկ յաւե-  
լում մէկ անգամին, և ընելով այնպէս  
շարունակ, պիտի սորվիս լաւ հաշուել.  
մէկ գաղտփար մէկ անգամին, և ընե-  
լով այնպէս շարունակ՝ պիտի սորվիս  
ինչ որ կը սորվեցունէ աշխարհիս մէջ  
գանտած խրթնագոյն գիրքը :

Յոննիկ, համբերութեամբ շարու-  
նակելով ուսանել՝ պիտի ըլլաս ու-  
սումնական :

«Այդ է ամէնը», հարցուց Յոննիկ :

«Այո, այս է ամէնը», ըսաւ հայրը :

«Թերևս կրնամ ընել այդպէս»,

ըսաւ Յոննիկ, և այն ժամանակէն վեց  
տարի չանցած՝ Յոննիկ եղաւ դպրոցին  
բարձրագոյն դասին մէջ առաջինը :

«ԵՍ ԵԿԱՅՑ ՏԵՐ»

«Հաճեցէք զնել դուռմ, տէր»,  
ըսաւ շատ փոքրիկ տղայ մը քաջածա-  
նօթ բժիշկի մը որ մտնելու վրայ էր  
իւր տունն Ամերիկեան մեծ քաղաքի  
մը մէջ :

Բժիշկը դարձաւ նայել փոքրիկ ման-  
կան վրայ : «Դու նպարտվածա՞ն ես»,  
հարցուց անոր :

«Ոչ, տէր, բայց իմ հայրս է», պա-  
տասխանեց տղան :

«Ներս բեր դուռմներէդ քանի մը  
հատ», ըսաւ բժիշկը, մինչ կը մտնէր  
տնէն ներս :

Տղան տարաւ դուռմները խոհանո-  
ցին դուռը, և ընդունեց քանի մը  
ստակ, զորս բժիշկը զրկած էր տալ  
անոր :

Երբ տղան կը դառնար բժիշկին տնէն,  
տեսաւ որ իրեն տրուած էր տելի  
ստակ քան որչափ էր դուռմներուն  
գինը : Մանրացուց ստակներէն մին  
և դարձաւ ետ և հարցուց թէ ո՞ր էր

բժիշկը, և ներս մտնելով տնէն եր-  
կընցուց անոր դուռմին գնէն աւելորդ  
ստակը :

«Դուն կրնաս պահել զայդ քեզի  
համար, որդեակ», ըսաւ բարի մարդը :

«Չեմ կրնար ընել զայդ», ըսաւ  
փոքրիկ նպարտվածա՞նը, «չիտակ չըլ-  
լար այդ, և հայրս պիտի բարկանայ  
ինձ :»

Յայտնի կ'երևէր թէ տղան էր շատ  
աղքատ ծնողաց զաւակ, վասնզի անոր  
հանդերձներուն վրայ կային շատ կար-  
կրտաններ, բայց տղան կակիկ և մա-  
քուր էր : Բժիշկը նայեցաւ անոր վրայ  
հաճոյքով մէկ երկու վայրկեան, և յե-  
տոյ ըսաւ ժպտելով,

«Դու ես աղուոր փոքրիկ տղեկ մը,  
չե՞ս ուզեր գալ և բնակել մեզի հետ  
և ըլլալ բժիշկ :

«Այո, տէր, կ'ուզեմ», պատաս-  
խանեց տղան :

«Մարդու նման խօսեցար», ըսաւ  
բժիշկը, և սիրով շոյելով տղին դու-  
ռը, թող տուաւ անոր երթալ :

Բանի մը շարժէն ետքը Յակոբ,  
բժիշկին ծառան, մտաւ հիւանդ նայե-  
լու սենեակը և ըսաւ բժիշկին թէ փոք-  
րիկ տղայ մը կ'ուզէր տեսնել իւր տէրը,  
երբ բժիշկը ըսաւ ներս թող գայ,  
ահա երեցաւ փոքր տղայ մը շատ մա-  
քուր հագուած, նոր բայց ստորին ա-  
տիճանի կտաւէ, և ձեռքը ծրարով  
մը : Թողլով զայն և իւր գլխարկը  
դրան քով, զնաց դէպ ի բժիշկը և  
ծառելով ըսաւ,

«Ես եկայ, տէր»,

«Ի՞նչ բանի համար եկար», հար-  
ցուց բժիշկը : Որուն խկոյն պատաս-  
խանեց տղան,

«Չեր հետ ապրել, և ըլլալ բժիշկ :

Նպարտվածա՞ն տղան էր սա, որ  
բժիշկին կատակի ձեւով հրաւերը առած  
էր իրեւ լուրջ խօսք : Խօսած էր անոր  
վրայ իւր հօր և մօր, և ասոնք դիտ-  
նալով բժիշկին աղիւ յատկութիւն-  
ները, ուրախութեամբ հաւանած էին  
որ տղան երթար այն ինչ պատրաս-  
տուէին անոր հանդերձները :

«Ես ձեռք մը նոր հանդերձ ունիմ»,  
ըսաւ տղան, «և ահա հոս», յաւել-  
ցուց ներս բերելով իւր ծրարը, «կայ  
ուրիշ ձեռք մը հանդերձ ևս, նաև  
երկու շապիկ, և երկու անձեռոցք :»

Ազնիւ բժիշկը շփոթեցաւ, վասն զի  
պէտք չունէր ուրիշ անձ յաւելցունել  
իւր տան վրայ այդ ժամանակ : Եւ  
սակայն կը զգար թէ չէր կրնար դէմ  
կենալ տղին անվեհեր հաւատոյն և  
և ծնողաց վստահութեան : Ընդունեց

փոքրիկ տղան որ այսպէս անոր խնա-  
մոց կը յանձնէր զինք : Եւ բժիշկին ձե-  
ռաց ներքև դաստիարակուելով այն  
չնչին նպարտվածա՞նը եղաւ յետ ժա-  
մանակաց՝ երկիրն ազնուագոյն մարդ-  
կանց և հանճարեղ և յաջող բժիշկ-  
ներէն մին :

ՈՐՈՒՒ ԱԶՔ Է

Պատանեաց խումբի մը զբօսնելը հա-  
ճելի կերպ է ջանալ ճաննալ զիրար  
կամ որոշել իրարմէ միայն աշուրները  
տեսնելով :

Եւ մը հաստատէ գնդասեղով  
դրան ճամբուն վրայ տախտակամա-  
ծէն իբր հինգ ոտք բարձր : Բայց մեծ  
թերթ մը թղթոյ վրայ երկու մակ  
որոց մէջէն տեսնուին երկու աչքերը  
որոշ բայց չերևին բնաւ երեսին ուրիշ  
մասերը :

Եթէ առաջիկայ գտնուողներուն մէջ  
կան այնպիսիք որ ունին տաղանդ-  
գ ծագութեան, թուղթին վրայ որ  
պիտի ծառայէ իբրև դիմակ, կրնան  
նկարել բերան և քիթ, նաև յօնք :

Երբ թուղթը գնդասեղով կը հաս-  
տատուի շալին վրայ, խումբը պէտք է  
բաժնուի երկու խմբակաց, որոց մին  
մնայ սենեկին մէջ իբրև հանդիսատես  
և գուշակ, և միւսը երթայ շալին ե-  
տեւ, իբրև կատարող դերին : Մնաց  
մին թող կենայ դիմակին, ծակած  
թուղթին, ետեւը, այնպէս որ անոր  
աշուրները որոշ տեսնեն սենեկին մէջ  
գտնուողները, և անոր ընկերներէն  
մին թող հարցունէ, «Որո՞ւ աչք է :»

Եթէ շիտակ պատասխան տրուի,  
չալին ետեւը գտնուողները կը ծափա-  
հարեն :

ՄԻ ՀԱՅՀԱՅԵՐ

Տը. Աբրաքոյ, յետ երկար բացա-  
կայութեան, իւր ի Հնդկաստան ըրած  
առաքելութենէն դառնալու ատեն,  
մինչ իւր տղուն հետ մէկտեղ շողենա-  
լին վերնայարկը կայնած էր, բնայ որ  
մարդ մը ամբարիշտ լեզուով կը խօ-  
սէր բարձրաձայն : «Տե՛ս, բարեկամ»,  
ըսաւ Տոգթօրը, հայհոյին ուղղելով  
խօսքը, «այս տղան, իմ որդիս, ծը-  
նած և մեծցած է հեթանոս երկրի  
մէջ, բայց իւր բոլոր կենաց մէջ լսած  
չէ բնաւ ցարդ որ մէկը հայհոյէ իւր  
Արարչին : Մարդը կարմրեցաւ, նե-  
րում ինդրեց իւր անզուշութեան  
համար, և շատ ամչցաւ :

Ամերիկայի Մետիստարոց Ընկերութեան Կողմէն,  
Իմպարի 2. Բ. ԿՐԻՆ  
Փոխ-Խմբագիր Դ. Պ. ՊԱՐՆԵՄ  
Ֆինանսերու Եօզուշու Կենտրոնական Խան :  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅԱՆ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈ ՊՅՈՒՅՆՆԵՐ